

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ

16.09.2015թ. գիտական խորհրդի նիստի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան

Գիտական խորհրդի 58 (հիսունութ) անդամից ներկա էին 39-ը (երեսունինը):

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում:

Զեկ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան

2. Գիտական կոչում շնորհելու հարց.

➤ Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, Բ.Գ.Թ. Ա. Ավագյան (դոցենտի գիտական կոչման հավակնորդ):

Հաղ.՝ մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյան

3. ա/ ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի 2014-2015 ուստարվա հաշվետվություն և ներքին գնահատման հաշվետվություն:

բ/ Տեղեկատվություն ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի 2015-2016 ուստարվա հոսքային դասարանների ձևավորման և առկա ժամաքանակի մասին:

Զեկ.՝ ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի տնօրեն Մ. Կարապետյան

4. Ընթացիկ հարցեր:

4.1 Գիտական և գիտատեխնիկական գործունեության թեմատիկ ֆինանսավորման նպատակով («Վերջավոր էլեմենտների մեթոդի զարգացումը և կիրարկումը միկրոպոլյար առաձգական բարակ ձողերի, սալերի և թաղանթների տեսությունների եզրային խնդիրների թվային լուծումների կառուցման համար» գիտական թեման արտահայտող) հայտի մրցույթի ներկայացման հարց: Թեմայի

գիտական ղեկավար ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ գիտությունների ղոկտոր, ԳՊՄԻ-ի բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Սամվել Սարգսյան:

Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի
գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

4.2 «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Բնապահպանություն և բնօգտագործում», «Դեղագործական քիմիա», «Քիմիա» մասնագիտությունների IV կուրսերի I կիսամյակի II միջանկյալ գրավոր (ստուգողական) աշխատանքները անհատական աշխատանքներով փոխարինելու մասին:

Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի
գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

4.3 Ռազմիկ Լևոնի Դարբինյանին ու Վարսենիկ Անուշավանի Գևորգյանին «ԳՊՄԻ-ի ոսկե հուշամեդալով» պարգևատրելու մասին:

Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան

Ռեկտոր Վ. Գրիգորյանը գիտական խորհրդի նիստը բացեց Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավաժական ինստիտուտի աշխատակից, երկրահանքաբանական գիտությունների ղոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Խաչիկի Բաղրամյանին կրթության և գիտության ոլորտում ներդրած մեծ ավանդի համար ՀՀ ԿԳՆ բարձրագույն պարգևի՝ ոսկե հուշամեդալի հանձնմամբ:

Պարգևի հանձնումից հետո գիտական խորհրդի նախագահը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 39 անդամ. կողմ՝ 39, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1.ԼՄԵՑԻՆ.- Ռեկտոր Վ. Գրիգորյանի զեկուցումը ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ռեկտոր Վ. Գրիգորյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 39 անդամ. կողմ՝ 39, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2.ԼՍԵՑԻՆ.- **Գիտական կոչում շնորհելու հարցը:** Մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյանը ներկայացրեց դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդին:

Դոցենտի գիտական կոչման հավակնորդ՝

№	Անուն, հայրանուն, ազգանուն	Ամբիոն, ձևայնացված կարգավիճակ	Գիտության բնագավառ, մասնագիտություն, թվանիշ
1.	Արմենուհի Արտուշի Ավագյան	Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ	Ժ.02.01 – «Հայոց լեզու»

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ռեկտոր, մ.գ.դ, պրոֆեսոր Վ. Գրիգորյանը, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Մ. Խաչատրյանը:

Գիտական կոչում շնորհելու մասին որոշում կայացնելու համար անցկացվեց փակ գաղտնի քվեարկություն, որի կազմակերպման համար ընտրվեց 3 հոգուց բաղկացած հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Սպարտակ Սողոյան, Արթուր Խաչատրյան և Բաբկեն Մերոբյան:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահը ներկայացրեց փակ գաղտնի քվեարկության հետևյալ արդյունքները.

№	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Արմենուհի Արտուշի Ավագյան	35	4	0

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաշվի առնելով, որ Արմենուհի Արտուշի Ավագյանի ներկայացրած գործերը լիովին համապատասխանում են ՀՀ կառավարության 09.07.2001թ. հ. 615 որոշմամբ հաստատված ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի՝ դոցենտի գիտական կոչման համար սահմանված պահանջներին (5բ), ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի նիստում անցկացված փակ գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա (քվեարկել են 39-ը. կողմ՝ 35, դեմ՝ 4, անվավեր՝ 0) Արմենուհի Արտուշի Ավագյանին շնորհել դոցենտի գիտական կոչում՝ Ժ.02.01 – «Հայոց լեզու» մասնագիտությամբ և միջնորդել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու այդ որոշումը և ամրագրելու համապատասխան դիպլոմով:

3.ԼՍԵՑԻՆ.- ա/ ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի տնօրեն Մ. Կարապետյանի զեկուցումը ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի 2014-2015 ուստարվա հաշվետվության ու ներքին գնահատման հաշվետվության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյանը, Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, դոցենտ Ա. Ֆարմանյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Ս. Ալեքսանյանը, ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Հ. Դրմեյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Հաստատել ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի 2014-2015 ուստարվա հաշվետվությունն ու ներքին գնահատման հաշվետվությունը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 39 անդամ. կողմ՝ 39, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ԼՍԵՑԻՆ.- բ/ ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի տնօրեն Մ. Կարապետյանի զեկուցումը դպրոցի 2015-2016 ուստարվա հոսքային դասարանների ձևավորման և առկա ժամաքանակի մասին:

ԳՊՄԻ-ի ավագ դպրոցում 2015-2016 ուսումնական տարում ձևավորվել է վեց դասարան. հումանիտար հոսքի մեկ 10-րդ դասարան, հումանիտար հոսքի երկու 11-րդ դասարան, բնագիտամաթեմատիկական հոսքի մեկ 11-րդ դասարան՝ ֆիզմաթ և կենսաքիմիա ենթահոսքերով, հումանիտար հոսքի երկու 12-րդ դասարան: 10-րդ Ա և 11-րդ Բ դասարաններում օտար լեզվի ժամերին դասարանը բաժանվում է երկու խմբի, մի խումբը ուսումնասիրում է ֆրանսերեն, մյուսը՝ անգլերեն: Նշենք, որ բնագիտամաթեմատիկական հոսքի 11-րդ դասարանը ձևավորվել է 2014-2015 ուստարվա ընդհանուր հոսքի 10-րդ Գ դասարանի աշակերտների ցանկությամբ, ծնողների դիմումների հիման վրա և ռեկտորի համաձայնությամբ, իսկ 2014-2015 ուստարվա հումանիտար հոսքի 11-րդ դասարանը կիսվել է երկու մասի և ձևավորվել հումանիտար հոսքի երկու 12-րդ դասարան՝ հիմք ընդունելով «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ 28.08.2014 թ. գիտական խորհրդի նիստի թիվ 1 որոշումը:

Դպրոցում 2015-2016 ուստարում առկա է 231.5 ժամ /մոտավորապես 10.5 դրույք/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-Ռեկտոր Վ. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

4.ԼՍԵՑԻՆ.- Ընթացիկ հարցեր:

4.1 ԼՍԵՑԻՆ.- Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանի հաղորդումը գիտական և գիտատեխնիկական գործունեության թեմատիկ ֆինանսավորման նպատակով («Վերջավոր էլեմենտների մեթոդի զարգացումը և կիրարկումը միկրոպոլյար առաձգական բարակ ձողերի, սալերի և թաղանթների տեսությունների եզրային խնդիրների թվային լուծումների կառուցման համար» գիտական թեման

արտահայտող) հայտի մրցույթի ներկայացման հարցը: Թեմայի գիտական ղեկավար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, ԳՊՄԻ-ի բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Սամվել Սարգսյան:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Հ. Դրմեյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Ս. Ալեքսանյանը, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Ս. Սողոյանը, ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Նկատի ունենալով թեմայի գիտական արդիականությունը, ներկայացված հետազոտական հստակ և ամբողջական ծրագիրը, իրականացման փուլային ռեալ շարադրանքը և թեմայի կատարման համար ձևավորված հետազոտական խմբի միանգամայն կոմպետենտ լինելը՝ երաշխավորել «Վերջավոր էլեմենտների մեթոդի զարգացումը և կիրարկումը միկրոպոլյար առաձգական բարակ ձողերի, սալերի և թաղանթների տեսությունների եզրային խնդիրների թվային լուծումների կառուցման համար» թեման ներկայացնել ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարված թեմատիկ ֆինանսավորման մրցույթին մասնակցելու:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 39 անդամ. կողմ՝ 39, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4.2 ԼՍԵՑԻՆ.- Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանի հաղորդումը «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Բնապահպանություն և բնօգտագործում», «Դեղագործական քիմիա», «Քիմիա» մասնագիտությունների IV կուրսերի I կիսամյակի II միջանկյալ գրավոր (ստուգողական) աշխատանքները անհատական աշխատանքներով փոխարինելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը, բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի ղեկան, կ.գ.թ, դոցենտ Ա. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաշվի առնելով «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Բնապահպանություն և բնօգտագործում», «Դեղագործական քիմիա», «Քիմիա» մասնագիտությունների IV կուրսերի չորսշաբաթյա մանկավարժական կամ ուսումնաարտադրական պրակտիկան անցկացնելու իրողությունը՝ նրանց I կիսամյակի II միջանկյալ գրավոր (ստուգողական) աշխատանքները փոխարինել անհատական աշխատանքներով:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 39 անդամ. կողմ՝ 39, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4.3 ԼՍԵՑԻՆ.- Ռեկտոր Վ. Գրիգորյանի հաղորդումը Ռազմիկ Լևոնի Դարբինյանին ու Վարսենիկ Անուշավանի Գևորգյանին «ԳՊՄԻ-ի ոսկե հուշամեդալով» պարգևատրելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր Ս. Սողոմյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. Հետերկրաշարժյան տարիներին ակտիվ հասարակական գործունեություն ծավալելու համար Ռազմիկ Լևոնի Դարբինյանին պարգևատրել «ԳՊՄԻ-ի ոսկե հուշամեդալով»:

2. Երկարամյա մանկավարժական գործունեության համար Վարսենիկ Անուշավանի Գևորգյանին պարգևատրել «ԳՊՄԻ-ի ոսկե հուշամեդալով»:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 39 անդամ. կողմ՝ 39, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Թ. ԽԱՉԱՏՐՅԱՆ